

ՀՀ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶ



*Մարզկենտրոնը՝ ք. Եղեգնաձոր
Տարածաշրջանները՝ Վայք և Եղեգնաձոր
Քաղաքները՝ Եղեգնաձոր, Ջերմուկ և Վայք*

ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավային հատվածում: Մարզը **պետական սահմանով** հարավում սահմանակից է Նախիջևանին, հյուսիսում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին, արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին և արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

Տարածքը	2308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ	55.8 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	19.4 հազ. մարդ
գյուղական	36.4 հազ. մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	34.8 %
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2006թ.	1.7 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2006թ. հուլիսի 1- դրությամբ)	209262 հա
այդ թվում՝ վարելահողեր	16287 հա

ՀՀ Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք, յուրահատուկ բնական պատենշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

ՀՀ Վայոց ձորի մարզն ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 6.7%-ը կամ 13240.1 հա կազմում են բնական անտառները:

Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

ՀՀ Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է + 41° C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35° C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2006թ.-ին **մարզի տնտեսության հիմնական ճյուղերի** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.8%,
- գյուղատնտեսություն՝ 4.4%,
- շինարարություն՝ 0.7%,
- առևտուր և ծառայություններ՝ 0.9%:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը **գյուղատնտեսությունն** է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 60.0%-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև **թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը**:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները, որոնց տեսակարար կշիռները 2006թ. հանրապետության հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունների ընդհանուր ծավալում, համապատասխանաբար, կազմել են՝ 73.2 և 18.0%:

Բեռնատրակտորափոխադրումները մարզում իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

Մարզում ակնհայտ են **ներքին և արտաքին գրոսաշրջության** զարգացման մեծ հեռանկարները:

ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	130	134	219
<i>այդ թվում՝</i>			
խանութներ	40	44	129
կրպակներ	59	59	59
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	1	1	1
առևտրի այլ օբյեկտներ	29	29	29

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Հաստատություններ, ընդամենը	75	79	79
<i>որոնցից՝</i>			
մախադարձակապետական	17	17	17
հանրակրթական պետական դպրոցներ	51	51	51
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	4	7	7
պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1
ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	2
ոչ պետական բարձրագույն ուսումնական	-	1	1

Եղեգնաձոր քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 8.2 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 119 կմ հեռավորության վրա:

Եղեգնաձոր քաղաքի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են **արդյունաբերությունն ու շինարարությունը**:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են **խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները**, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև **պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները**:

Վալթ քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 5.9 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 135 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:

Վալթ քաղաքի տնտեսության հիմնական ճյուղն **արդյունաբերությունն** է: Հիմնականում զարգացած են **հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները**:

Ջերմուկ քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 5.3 հազ. բնակիչ) գտնվում է 2070 մ բարձրությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 170 կմ, մարզկենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ծանաչված առողջարաններից են «Ջերմուկ»-ը, «Նոր կյանք»-ը, «Գլաձոր»-ը, «Աղաջանյանի անվան առողջարան»-ը, «Արարատ»-ը և «Երագ»-ը:

Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

Ջերմուկ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը **ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրի, արտադրությունն** է, որի տեսակարար կշիռը 2006թ. մարզի հանքային ջրերի արտադրության ընդհանուր ծավալում կազմել է 93.0%:

Արդյունաբերության ոլորտում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև **կաթի և կաթնամթերքի արտադրատեսակների, ձեռագործ գորգերի և էլեկտրատեներգիայի (ՀԷԿ) արտադրությունները**:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր
Ջերմուկ	ք. Ջերմուկ
	գ. Կեչուտ
Վայք	ք. Վայք

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1 Ագարակաձոր	
2 Ագատեկ	
3 Աղավնաձոր	
4 Աղնջաձոր	
5 Արենի	
	<ul style="list-style-type: none"> • Արենի • Ամադու
6 Արին	
7 Արտաբույնք	
8 Արտավան	
9 Արփի	
10 Բարձրունի	
11 Գետափ	
12 Գյաձոր	
13 Գնդեվազ	
14 Գնիշիկ	
	<ul style="list-style-type: none"> • Գնիշիկ • Մոզրով
15 Գողթանիկ	
16 Գոմք	
	<ul style="list-style-type: none"> • Գոմք • Ախտա • Կապույտ
17 Ելփին	
18 Եղեգիս	
19 Ջառիթափ	
	<ul style="list-style-type: none"> • Ջառիթափ • Հորադիս
20 Ջեղեա	
21 Թառաթումբ	
22 Խաչիկ	
23 Խնձորուտ	
24 Կարմրաշեն	
25 Հերիեր	
26 Հերմոն	
	<ul style="list-style-type: none"> • Հերմոն • Արատես • Կալասար
27 Հորբատեղ	
28 Հորս	
29 Մալիշկա	
30 Մարտիրոս	
31 Նոր Ազնաբերդ	

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
32	Շատին	
33	Չիվա	
34	Ռինդ	
35	Սալի	
36	Սարավան	
		<ul style="list-style-type: none"> • Սարավան • Ռիդնոր
37	Սերս	
38	Վարդահովիտ	
		<ul style="list-style-type: none"> • Վարդահովիտ • Գեոիկվանք • Սևաժայռ
39	Վերնաշեն	
40	Փոռ	
41	Զարագյուխ	

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ԸԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2006թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10000	5054	4946
Ծնվածներ, մարդ	113	52	61
Մահացածներ, մարդ	90	44	46
Անուանություններ	49	X	X
Անուանալուծություններ	11	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավերետով, քառ.մ	29.3	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	139	62	77
հանրակրթական	1688	824	864
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	135	92	43
միջին մասնագիտական	57	42	15
բարձրագույն մասնագիտական	50	41	9
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	25950
Մարզիկներ, մարդ	332	49	282
Զբաղվածներ, մարդ	4843
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	187	140	47
բժիշկներ	19
կրտսեր բուժանձնակազմ	50
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	242	168	74
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1911
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	461	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	45430
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	125
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	20	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	8	X	X
միջին ծանրության	6	X	X
ծանր	6	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Յուրանիշները հաշվարկային են: